ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2023 թվականի N 1045-Ա

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ

Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը և «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Որպես Հայաստանի Հանրապետությանը նվիրատվություն՝ ընդունել «Հայաստանի ԴՕՍԱԱՖ» համահայկական հայրենասիրական հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Շենգավիթ, Արշակունյաց պողոտա 87 հասցեում գտնվող վարչական շենքի՝ 66 795 017 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով 388.54 քառ. մետր մակերեսով տարածքը (այսուհետ՝ անշարժ գույք) և, որպես պետական սեփականություն, ամրացնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:

2. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանն ամրացված՝ Երևան քաղաքի Շենգավիթ, Արշակունյաց պողոտա 73 շենք, 4/1 շինություն հասցեում գտնվող

վարչական շենքի 4-րդ հարկի՝ 30 235 119 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով 307.6 քառ. մետր մակերեսով տարածքը (այսուհետ՝ անշարժ գույք) անհատույց սեփականության իրավունքով հատկացնել «Հայաստանի ԴՕՍԱԱՖ» համահայկական հայրենասիրական հասարակական կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն):

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել կազմակերպության հետ՝

1) սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված անշարժ գույքերի նվիրատվության պայմանագրերի կնքման և հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ պայմանագրերում նախատեսելով, որ՝

ա. սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրի նոտարական հաստատման և գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացվելու են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության միջոցների հաշվին,

բ. սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրի նոտարական հաստատման և գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացվելու են կազմակերպության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ